

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՍԵՂԱ ՍԱՄՎԵԼԻ

**ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ
(ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ)**

ՍԵՂՄԱԳԻՐ

Ը. 00.02. - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ԵՐԵՎԱՆ - 2022

**Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական
համալսարանում**

Գիտական ղեկավար՝

**տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Սարգսյան Հայկ Լևոնի**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

**տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Մարկոսյան Աշոտ Խաչատուրի**

**տնտեսագիտության թեկնածու
Գաբրիելյան Վարդուհի Գևորգի**

Առաջատար կազմակերպություն՝

**ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտ**

**Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022 թ. մայիսի 13-ին,
ժամը 15:00-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի
տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդի նիստում:**

Հասցե՝ 0009, ք. Երևան, Արուսյան փող. 52

**Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական
համալսարանի գրադարանում:**

Սեղմագիրն առաքված է 2022 թ. մարտի 31 -ին:

**015 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղ
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ՝**



Ա. Շ. Հակոբջանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Սեփականության կառավարման գործառույթները ժամանակակից պետության սոցիալ-տնտեսական քաղաքականության առանցքային ու անբաժանելի մասն են: Ընդ որում, այս ոլորտում պետությունը հանդես է գալիս, մի կողմից, որպես սեփականատեր (պետական սեփականության մասով, որը ներդրված է ինչպես առևտրային, այնպես էլ ոչ առևտրային կազմակերպություններում), իսկ մյուս կողմից՝ որպես տնտեսության կառավարման իրականացնող (կարգավորիչ): Այսինքն՝ պետությունը մասնակցություն է ապահովում ինչպես պետական, այնպես էլ մասնավոր ձեռնարկատիրությունում՝ կիրառելով համապատասխան կարգավորման գործիքներ և կառուցակարգեր: Պետության նման երկակի բնույթը՝ որպես սեփականատեր և որպես կարգավորող, իր ազդեցությունն է թողել նրա գործառույթների վրա: Տնտեսությունում պետական սեփականության մեծ տեսակարար կշիռը վկայում է պետության բարձր ազդեցության մասին, և ընդհակառակը: Ու թեև աշխարհի երկրների մեծ մասի համար ավելի հատկանշական է մասնավոր և խառը սեփականությամբ առևտրային կազմակերպությունների գերակայությունը տնտեսությունում, այնուամենայնիվ ներկայումս դժվար է գտնել գեթ մեկ երկիր, որտեղ չկա պետական սեփականություն և պետական ձեռնարկատիրություն: Աշխարհի երկրների շարքում սեփականության ընդհանուր կազմում ամենափոքր պետական սեփականության բաժնեմաս ունի ԱՄՆ-ը (ըստ տարբեր գնահատականների՝ 3-5%), Եվրամիության երկրներում միջին ցուցանիշը կազմում է 20% (այս ընդհանրությունից բացառություն է կազմում Ֆրանսիան, որտեղ պետական սեփականության բաժնեմասը գնահատվում է 45-47%-ի չափով):

Հայաստանի Հանրապետությունում 1990-ական թվականներին սկսված պետական սեփականության ապապետականացման գործընթացը, ինչպես նաև ազատական մյուս բարեփոխումները (դրանց միջուկը մասնավոր սեփականության իրավունքի կայացումն էր) արմատապես փոխեց մեր երկրում գոյություն ունեցող սեփականության կառուցվածքը: ՀՀ կառավարությունը զգալի ուշադրություն է դարձնում նաև պետական գույքի կառավարման հիմնախնդիրներին: Բավական է նշել, որ Հայաստանի Հանրապետության կառավարության վերջին տարիների համար ընդունված ծրագրերում (և՛ 2017-2022 թվականների, և՛ 2019թ.-ի փետրվարի 14-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված հետհեղափոխական՝ 2019-2023 թվականների, և՛ 2021 թվականի հունիսի 20-ի խորհրդարանական արտահերթ ընտրություններից հետո ձևավորված կառավարության 2021-2026 թվականների ծրագրերում) առանձնացված է «Պետական գույքի կառավարումը» բաժինը (վերջին ծրագրում այն վերնագրված է «Պետական գույքի արդյունավետ կառավարում»), որտեղ տեղ են գտել առաջիկա տարիներին ՀՀ կառավարության կարևոր գործառույթները՝ պետական սեփականության արդյունավետ կառավարման ոլորտում: Պետական սեփականության կառավարման արդյունավետության խնդիրը լուծելու համար,

նշված ծրագրերի իրականացումը ապահովող ՀՀ կառավարության որոշումներում, նախատեսվում ու իրականացվում են բազմաթիվ միջոցառումներ:

Սեփականության կառավարման հիմնախնդիրների, այդ գործընթացի արդյունավետության բարձրացման վերաբերյալ մեթոդական և գործնական մոտեցումներ են մշակվել ինչպես արտասահմանյան, այնպես էլ հայրենական տնտեսագետների կողմից:

Կարևոր է նաև նկատել, որ ՀՀ ՀՆԱ-ի ըստ վերահսկողության հատկանիշի 2019թ.-ի տվյալներն ունեցել են հետևյալ բաշխվածությունը՝ պետական 798736.2 մլն դրամ (կամ ամբողջի 13.5%-ը), ազգային մասնավոր՝ 4071469.5 մլն դրամ (կամ ամբողջի 68.8%-ը) և օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող՝ 1049564.0 մլն դրամ (կամ ամբողջի 17.7%-ը):

Հայաստանի Հանրապետությունում սեփականության կառավարման արդյունավետության բարձրացումը և ոլորտում արմատական փոփոխություններն, անկասկած, պահանջում են սեփականության իրավունքի իրացման հետ կապված հարաբերությունների համակարգի ինչպես տեսական, այնպես էլ գործնական բնույթի հիմնահարցերի համալիր հետազոտում, այդ ուղղությամբ ՀՀ կառավարության քաղաքականության հայեցակարգային և ծրագրային մոտեցումների վերլուծություն, առկա հիմնախնդիրների բացահայտում և համապատասխան լուծումների ու հանձնարարականների մշակում: Ատենախոսությունը նվիրված է նշված հիմնահարցերի և դրույթների հետազոտությանը, ինչով էլ պայմանավորված է ընտրված թեմայի արդիականությունը:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակը ՀՀ-ում սեփականության կառավարման բարելավմանն ուղղված մոտեցումների և միջոցառումների մշակումն է, որին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները՝

➤ ուսումնասիրել սեփականության ձևավորման տեսամեթոդական հիմքերը, դրանց զարգացումը, սեփականության իրավունքների ժամանակակից մեկնաբանություններն ու իրացման հիմնախնդիրները,

➤ հետազոտել սեփականության՝ որպես տնտեսագիտական կատեգորիայի բովանդակությունը, սեփականության իրավունքի սահմանադրականության բնորոշումը և համեմատական բնութագրերը, սեփականության կառավարման գործընթացը,

➤ վերլուծել Հայաստանի Հանրապետությունում սեփականության իրավունքների բազմազանեցման և ապակենտրոնացման գործընթացը, ներկայացնել այդ գործընթացի առանձնահատկությունները,

➤ հետազոտել պետական սեփականության ներդրման հիմնական ոլորտները, այդ կապակցությամբ ուսումնասիրել պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում, ինչպես նաև պետական ու համայնքային

¹ Հայաստանի ազգային հաշիվները, Եր., ՀՀ վիճակագրական կոմիտե, 11 նոյեմբերի 2021թ., էջ 110:

ոչ առևտրային կազմակերպություններում սեփականության կառավարման հիմնախնդիրները,

➤ հետազոտել ՀՀ-ում սեփականության իրավունքի ինստիտուտի կայացման հիմնախնդիրները՝ սահմանադրականության դիտակետից և առաջարկել բարելավման ուղիները,

➤ առաջարկել սկզբնական օղակներում (կազմակերպություններում) սեփականության կառավարման արդյունավետության գնահատման մոտեցումներ,

➤ առաջարկել պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում տնտեսաիրավական կարգավորման նոր գործիքներ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Ուսումնասիրության օբյեկտը սեփականությունն է (ներառյալ՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերը, բաժնեմասերը, անշարժ և շարժական գույքը), իսկ ուսումնասիրության առարկան՝ սեփականության (ներառյալ՝ պետական) կառավարման և դրա արդյունավետության բարձրացմանն ուղղված մեթոդներն ու քաղաքականությունը:

Հետազոտության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը: Ատենախոսության համար հիմք են հանդիսացել տնտեսագիտության դասական և ժամանակակից աշխատությունները, սեփականության հարաբերությունների ձևավորման և փոփոխման ուղղությամբ իրականացված բարեփոխումները, այդպիսի բարեփոխումների արդյունքները, սեփականության կառավարմանը վերաբերող հայրենական և արտասահմանյան գրականությունը, այդ ոլորտը կարգավորող ՀՀ օրենքներն ու մյուս իրավական ակտերը:

Ուսումնասիրության համար անհրաժեշտ տեղեկատվական հիմք են հանդիսացել միջազգային կազմակերպությունների հետազոտությունների արդյունքները, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի (մինչև վերակազմավորումը՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության), ՀՀ վիճակագրական կոմիտեի (նախկինում՝ ՀՀ ԱՎԾ-ի), պետական սեփականության կառավարման ոլորտում լիազորություններ ունեցող պետական կառավարման մարմինների, Համաշխարհային բանկի խմբի մեջ մտնող կազմակերպությունների պաշտոնական նյութերն ու տվյալները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են տնտեսա-վիճակագրական, տնտեսաչափական, համակարգային, համեմատական և խմբավորումների վերլուծության մեթոդները:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթը: Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները, որոնք պայմանավորված են ուսումնասիրությունում առաջադրված խնդիրների լուծմամբ, կայանում են հետևյալում.

1. Տնտեսության պետական կառավարման տեսա-գործնական հիմքերի համակողմանի վերլուծության արդյունքում բացահայտվել են ազգային տնտեսությունում պետական սեփականության և պետական

ձեռնարկատիրության փոխառնչություններն ու սահմանները, դրանց կառավարման արդյունավետության բարձրացման նախադրյալները, հիմնավորվել են տնտեսական քաղաքականության մեջ սեփականության կառավարման բովանդակությունը և գործիքակազմը:

2. Բացահայտվել են ինստիտուցիոնալ բնույթի այն ցուցիչները, որոնք վճռորոշ դերակատարում են ունեցել սահմանադրականության դեֆիցիտի կրճատման, սահմանադրականության չափանիշից ելնելով երկրների կլաստերացման համար: Այդ ցուցիչների թվում են գույքային իրավունքների իրացումը, կոռուպցիայի մակարդակը, կարգավորման որակը և այլն:

3. Պետության կողմից իր սեփականության իրավունքների իրացման և կազմակերպությունների գործունեության ֆինանսա-տնտեսական արդյունքների վերլուծության արդյունքում բացահայտվել են ՀՀ-ում պետական սեփականության կառավարման վրա ազդող նեգատիվ գործոններն ու ներկայացվել են այդ գործընթացի արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկություններ և միջոցառումներ:

4. Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեությունը խթանելու և պետական ակտիվների շահութաբերության մակարդակը բարձրացնելու համար առաջարկվել են այդպիսի կազմակերպությունների գործունեության գնահատման մոտեցումներ:

5. Առաջարկվել է պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կառավարման մոդելի փոխակերպում, որը կապահովի հնարավոր ինքնուրույնություն այդ կազմակերպությունների համար, ինչպես նաև թույլ կտա ներդնել առևտրային կազմակերպություններին բնորոշ գործարար և կառավարման կառուցակարգերը:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսությունը ամփոփ գիտական ուսումնասիրություն է, որտեղ կատարված վերլուծություններից բխող եզրակացությունների հիման վրա արված առաջարկությունները, ինչպես նաև պետական սեփականության կառավարման արդյունավետության բարձրացման արդյունքում բյուջետային մուտքերի, կազմակերպությունների սեփական եկամուտների ավելացման և կառավարման որակի բարելավման վերաբերյալ առաջարկված ուղիները կարող են օգտագործվել գործադիր մարմինների, ինչպես նաև առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կառավարման մարմինների կողմից՝ իրենց սեփականությունից և պետական բաժնետոմսերից (բաժնեմասերից) ստացվող հատուցյի ավելացման նպատակով ու կառավարման որակի բարելավման ուղղությամբ իրականացվող աշխատանքների կատարման ժամանակ:

Ուսումնասիրության արդյունքները կարող են օգտակար լինել պետական գույքի կառավարման լիազորություններ ունեցող մարմինների, ինչպես նաև պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների, պետական գույքի կառավարման հիմնախնդիրներով զբաղվողների համար:

Ուսումնասիրության հիմնադրույթները կարող են օգտագործվել ԲՈՒՀ-

երում դասավանդվող պետական գույքի կառավարման դասընթացներում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Ատենախոսության հիմնադրույթները և ուսումնասիրության արդյունքները քննարկվել են Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում, «Սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոնի» գիտական սեմինարում: Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունն արտացոլված են հրապարակված 8 (ութ) գիտական հոդվածում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության տեքստը շարադրված է 162 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ձևակերպված են հետազոտության նպատակն ու հիմնախնդիրները, տրված են առարկան և օբյեկտը, ներկայացված են ուսումնասիրության հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը, դրանց գիտա-գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Սեփականության ձևավորման տեսամեթոդաբանական հիմնադրույթները և սահմանադրականությունը անցումային տնտեսությամբ երկրներում» գլխում ուսումնասիրվել են սեփականության՝ որպես տնտեսագիտական կատեգորիայի բովանդակությունը, վերհանվել են սեփականության իրավունքի սահմանման և իրացման հիմնախնդիրները: Հեղինակը քննարկում է սեփականության իրավունքը սահմանադրականության համատեքստում, ինչպես նաև ներկայացնում է սեփականության կառավարման գործընթացը:

Սեփականություն կատեգորիան ուսումնասիրվել է որպես բազմաթիվ հասարակական գիտությունների առարկա, ինչով և պայմանավորված է դրա վերաբերյալ ինչպես բազմաթիվ գիտական աշխատությունների առկայությունը, այնպես էլ մեկնաբանությունների բազմազանությունը:

Արևմտյան տնտեսագետների շրջանակներում 20-րդ դարի կեսերին մեծացավ հետաքրքրությունը սեփականության իրավունքի տնտեսագիտության նկատմամբ (The economics of property rights)²: Դրա էությունը նրանում է, որ որպես սեփականություն հանդես է գալիս ոչ թե ռեսուրսը (բարիքը), այլ դրա օգտագործման հետ կապված «իրավունքների փունջը»: Այսինքն՝ ռեսուրս

² Սեփականության իրավունքի տնտեսագիտական տեսության հիմնադիրներ են համարվում հայտնի տնտեսագետներ Ռոնալդ Բոուզը և Արմեն Ալչյանը: Հետագայում նշված տեսության զարգացման գործում ակտիվ մասնակցություն են ունեցել Գ.Դեմսեցը, Յ.Բարցելը, Դ.Նորթը, Ռ.Պոզները և այլք:

ինքնին սեփականություն չէ, այլ ռեսուրսի օգտագործմանն ուղղված իրավունքները:

Սեփականության, որպես բարդ և բազմամակարդակ կատեգորիայի, առաջին՝ իրավական մակարդակում սեփականությունը արտահայտում է մարդու վերաբերմունքը և իշխանությունը իրի նկատմամբ³: Այդ իշխանությունը դրսևորվում է մարդու սեփականության օբյեկտների տիրապետման, տնօրինման և օգտագործման հնարավորությամբ: Իրի (բարիքի) նկատմամբ մարդու վերաբերմունքը, ամրագրվելով օրենքներում և իրավական նորմերում, ձեռք է բերում իրավական հարաբերությունների ձև: Սակայն իրը դառնում է սեփականություն միայն այն դեպքում, երբ մարդիկ դրա կապակցությամբ մտնում են որոշակի հարաբերությունների մեջ⁴:

Սեփականությունը՝ որպես իրավաբանական կատեգորիա, բարիքի յուրացման կապակցությամբ օբյեկտիվորեն ձևավորված հարաբերությունների սուբյեկտիվ արտացոլումն է և հասարակական գիտակցության մեջ գործնականում ձևավորված դրույթների ամրագրման հասարակական պահանջմունքի արդյունքը: Կարելի է ասել, որ սեփականության իրավունքը հանդիսանում է սեփականության տնտեսական հարաբերությունների ոչ միայն արդյունքը, այլև նախադրյալը:

Քաղաքացիական հասարակության և իրավական-ժողովրդավարական պետականության ձևավորման գործընթացում կարևորագույն խնդիրների շարքում են մտնում սեփականության բոլոր ձևերի պաշտպանության կառուցակարգերի զարգացումն ու կատարելագործումը, պետության գործառույթների սահմանազատումը և ներգործության ձևերի, չափի որոշումը, ինչպես նաև պատասխանատվության նորմերի սահմանումը⁵:

Սեփականության իրավունքի պաշտպանվածության ոլորտում երկրների ձեռքբերումները գնահատվում են մի շարք միջազգային կազմակերպությունների կողմից: «<Երիթիջ ֆաունդեյշն»-ը անդրադառնում է սեփականության իրավունքին որպես տնտեսական ազատության համաթվի ենթացուցիչի: Սեփականության իրավունք ենթացուցիչը որակական գնահատական է այն չափի, որով երկրի իրավական համակարգը թույլատրում է անձանց կուտակել մասնավոր սեփականություն, որը պաշտպանված է կառավարության կողմից արդյունավետորեն կիրառվող հստակ օրենսդրությամբ: Այն նաև գնահատում է

³ Головачев А.С. "Экономическая теория". Институт экономики и права им. И.Кушнера. <http://be5.biz/ekonomika/e012/03.htm>

⁴ Տե՛ս նույն տեղը:

⁵ Նշված հիմնախնդիրների քննարկմանն են նվիրված, մասնավորապես, Бородач М. В. «Конституционный принцип признания и защиты равным образом всех форм собственности как базисная ценность конституционной экономики», Ежегодник конституционной экономики 2019, М.: ЛУМ, 2019, с. 154-182, Кравченко Д. В. «Принципы ответственности государства за свои действия и конституционной соразмерности как конституционные гарантии защиты собственности», Ежегодник конституционной экономики 2018, М.: ЛУМ, 2018, с. 260-275 աշխատությունները:

պետության կողմից մասնավոր սեփականության հարկադիր օտարման հնարավորությունը, դատական համակարգի անկախությունը և անաչառությունը:

Նորբեյան մրցանակակիր, ժամանակակից ամենաազդեցիկ տնտեսագետներից մեկը, Մ. Ֆրիդմենը սեփականության սահմանման վերաբերյալ գրում է. «Կա տնտեսության մեկ այլ ոլորտ, որտեղ այս հարցին պատասխանները և՛ բարդ է, և՛ շատ կարևոր. խոսքը սեփականության իրավունքների սահմանման մասին է: Դարերի ընթացքում, զարգանալով և մեր օրենսգրքերում ամրագրվելով, սեփականություն հասկացությունն այնպես է մխրճվել մեր գիտակցության մեջ, որ մեզ հաշիվ չենք տալիս որ սեփականությունը և սեփականություն ունենալու իրավունքը սոցիալական բարդ կառուցվածքներ են, ոչ թե ակնհայտ ճշմարտություններ: . . . Սա թույլ է տալիս ենթադրել, որ սեփականության մասին հստակ և ընդհանուր սահմանումը շատ դեպքերում ավելի կարևոր է, քան այդ սահմանման բովանդակությունը»⁶:

Նոր ինստիտուցիոնալիզմի շրջանակներում ձևավորված (Արմեն Ալջանի և Հերբերտ Դենսեյի) սեփականության իրավունքի տեսության կողմնակիցները այն դիտարկում են որպես իրավասությունների փունջ, որը սահմանում է այն սկզբունքները, որոնցով կարգավորվում է ռեսուրսների օգտագործումն ըստ դրանց նպատակահարմարության, որի հիմքը տնտեսական արդյունավետության ապահովման անհրաժեշտությունն է: Այս կապակցությամբ Պ. Հեյնեն գրում է. «Հենց իրական սեփականության իրավունքներն են ձևավորում մարդկանց սպասումները և, հետևաբար, որոշում նրանց վարքագիծը»⁷: Այսինքն՝ սեփականության իրավունքի օրենսդրական սահմանմամբ և կիրառմամբ է ապահովվում ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:

Պատմականորեն գոյություն ունեն սեփականության հետևյալ ձևերը՝ մասնավոր սեփականություն, կոլեկտիվ սեփականություն և պետական սեփականություն, որն անհրաժեշտ է բազմաթիվ ներքին և արտաքին գործառույթներ (պաշտպանության ու անվտանգության, տնտեսական-կազմակերպական, սոցիալ-մշակութային և այլն) իրականացնելու համար:

Ժամանակակից մի շարք հեղինակների հետազոտությունների⁸ արդյունքները հնարավորություն են տալիս սահմանել սեփականության տեղը տնտեսական համակարգում և նրա փոխազդեցությունը այլ հիմնական տնտեսագիտական կատեգորիաների հետ: Ընդ որում, այդ հեղինակների աշխատանքներում սեփականության (գույքային) հարաբերությունները դիտարկվում են այնպիսի հիմնախնդիրների զուգակցմամբ, որոնք գրեթե չեն դիտարկվել սեփականության (գույքային) հարաբերություններին առնչվող ավելի վաղ հրապարակված աշխատություններում. սեփականությունը և արժեքը, սեփականությունը և գործարքային ծախսերը և այլն: Այս հեղինակների

⁶ Միլտոն Ֆրիդմեն. «Կապիտալիզմ և ազատություն», թարգմանությունը անգլերենից՝ Լ. Չաքարյանի, Եր. , Newmag, 2021, էջ 80-81:

⁷ Հեյնեն Պոլ, Տնտեսագիտական մտածելակերպ. Եր., «Էդիթ Պրինտ», 2008, էջ 345:

⁸ Տե՛ս, օրինակ, Смирнов И.К., Смирнова О.И. Всеобщее и основное противоречие собственности. СПб.: Изд-во СПбГУ, 2001.

դիրքորոշումն առանձնանում է նրանով, որ նրանք հասկանում են սեփականությունը որպես կամային հարաբերություն, որն իրականացվում է իրական տնտեսական գործունեության մեջ:

Պրոֆ. Հ. Լ. Սարգսյանը դեռևս սոցիալիզմի պայմաններում կատարված իր հետազոտությունում որոշակի խնդրի լուծում տեսնում էր նրանում, որ միոլեթնական հանրապետությունը «կենտրոնից» վարձակալում է իր տարածքում գտնվող ունեցվածքը: Ընդ որում, սոցիալիստական արտադրության արդյունքների յուրացման բազմամակարդակ կառուցվածքը և բազմակի սոփյեկտայնությունը հանգեցնում են այն մտքին, որ սոցիալիստական սեփականության ձևերի վերակազմավորման նախապատվելի ուղղություններից մեկը դառնում է տեղական մարմինների սեփականության ձևը⁹:

Սեփականության մասին տեսությունների զարգացման դինամիկայի ուսումնասիրության արդյունքում ժամանակակից հեղինակներն առանձնացնում են հետևյալ կարևոր փուլերը.

- նախասկզբնական մասնավոր սեփականությունը դիտարկվում էր, որպես հասարակական (կոլեկտիվ) և պետական սեփականությունից ածանցյալ,

- սեփականության իրավունքի իրավական ձևակերպումը սահմանափակվում էր իրեն պատկանող իրի նկատմամբ սեփականատիրոջ կոնկրետ իրավասությունների թվարկմամբ,

- ոչ ժողովրդավարական քաղաքական ռեժիմներում սեփականության ընկալման գազաթնակետն էր սեփականության իրավունքի պատկերացումը, որպես իրի նկատմամբ սեփականատիրոջ բացարձակ իշխանություն:

Սեփականության իրավունքի ժամանակակից պատկերացումը բխում է.

- սեփականատիրոջ իրավասությունների ավարտուն ցանկի ամրագրման անհնարինությունից,

- իրի նկատմամբ սեփականատիրոջ բացարձակ իշխանության գաղափարի հրաժարումից,

- սեփականության օբյեկտի հասկացության ընդարձակումից՝ զուտ իրային իրավունքների սահմաններից ոչ նյութական բարիքների ոլորտ (սեփականությունը դրամական ձևով, մտավոր (ինտելեկտուալ) սեփականություն, հեղինակային իրավունք և այլն)¹⁰:

Անցումային երկրներում սահմանադրականության մակարդակի որոշման համար հայ հետազոտողները օգտագործել են ցուցիչների համալիր համակարգ, որը պայմանականորեն առանձնացվում է երեք խմբի՝ իրավական պետության, ժողովրդավարության մակարդակի և սոցիալ-տնտեսական զարգացման բնութագրիչներ:

⁹ Саркисян Г.Л. «Управление социально-экономическим развитием регионов (методология и практика)», автореферат диссертации на соискание ученой степени доктора экономических наук, специальность 05.13.10. – Управление в социальных и экономических системах, М., 1990, с. 30-31.

¹⁰ Դավոյան Ա., Մարկոսյան Ա., Սարգսյան Հ. «Վերափոխումները անցումային երկրների տնտեսություններում», Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2003թ., էջ 245-246:

Փոխադարձ կապերի կառուցվածքի վերլուծությունը, որը հիմնված է ուսումնասիրվող համակարգի փոփոխականների միջև փոխադարձ կապերի առանձնահատկությունների ընդհանրական բնութագրիչի սահմանման վրա, հեղինակների կողմից հիմնավորվել և ընտրվել է որպես անցումային երկրներում սահմանադրականության մակարդակի գնահատման գործիք¹¹: Սահմանադրականության ինտեգրալ մակարդակը հաշվարկվել է իրավական պետության և ժողովրդավարական զարգացումների բնութագրիչների հիման վրա: Հեղինակների մոտեցման համաձայն, հետևյալ չորս փոփոխականները՝ երկրում քաղաքական կայունության ցուցիչը, բնակչության եկամուտների բևեռացումը՝ Ջինիի գործակիցը, երկրի բնակչության աղքատության մակարդակը և մարդկային զարգացման ցուցիչը ուղղակիորեն ներառվել են կլաստերային վերլուծության մեջ: Թվով 13 փոփոխականների հիման վրա գործոնային վերլուծության արդյունքում հայտնաբերվել են 2 ջրացահայտված (լատենտ) գործոններ, որոնք պայմանականորեն անվանվել են՝ 1) երկրների ժողովրդավարական զարգացման գործոն, 2) երկրների ինստիտուցիոնալ զարգացման գործոն: Աղյուսակ 1-ում ներկայացված են գործոնային վերլուծության արդյունքները, որից կարելի է նկատել, որ առաջին՝ ժողովրդավարական զարգացման գործոնը կապված է աղյուսակի առաջին 8 տեղերում բերված փոփոխականներից, իսկ երկրորդ՝ ինստիտուցիոնալ զարգացման գործոնը՝ աղյուսակի վերջին 5 տողերում ներկայացված փոփոխականների հետ:

Աղյուսակ 1

Պտույտից հետո բաղադրիչ մասրից


Ցուցիչները	2017 թ. -ին հասանելի տվյալներով		2021 թ. -ին հասանելի տվյալներով	
	Բաղադրիչ		Բաղադրիչ	
	1	2	1	2
1. Քաղաքացիական հասարակություն FHNT	-.893	-.426	.914	.390
2. Քաղաքական բազմակարծություն FHFV	.858	.482	.875	.450
3. Խոսքի և դավանանքի ազատություն FHFV	.851	.505	.878	.433
4. Ընկերությունների և կազմակերպությունների իրավունք FHFV	.850	.506	.866	.459
5. Ընտրական գործընթաց FHNT	-.825	-.522	.881	.431
6. Խոսքի իրավունք և հաշվետվողականություն WGI	.803	.580	.819	.565

¹¹ Հարությունյան Գ. Գ., Սարգսյան Հ. Լ., Գևորգյան Ռ. Ա. . «Սահմանադրականություն. ախտորոշման, մշտադիտարկման և կտաավարման խնդիրներ», Եր., «Ձանգակ-97» ՍՊԸ, 2017, էջ 31-34:

7. Անհատական ինքնավարություն և անձի իրավունք FHFV	.764	.585	.708	.659
8. Լրատվամիջոցների անկախություն FHNT	-.711	-.656	.735	.611
9. Կառավարության արդյունավետություն WGI	.439	.862	.310	.896
10. Սեփականության իրավունք HF	.451	.845	.381	.825
11. Իրավունքի գերակայություն WGI	.521	.844	.558	.815
12. Կոռուպցիայի ընկալման համաթիվ TI	.529	.820	.455	.834
13. Կարգավորման որակ WGI	.604	.730	.542	.796

Ծանոթություն. 2017 թ. -ին հասանելի տվյալներով հաշվարկների աղբյուրը՝ Հարությունյան Գ. Գ., Սարգսյան Հ. Լ., Գևորգյան Ռ. Ա. . «Սահմանադրականություն. ախտորոշման, մշտադիտարկման և կառավարման խնդիրներ», Եր., «Ձանգակ -97» ՍՊԸ, 2017, էջ 41, 2021 թ. -ին հասանելի տվյալներով հաշվարկները հեղինակին են:

Գործոնային վերլուծության և ուսումնասիրությունների արդյունքում որոշվել են այն փոփոխականները (գործոնները), որոնք օգտագործվելու են կլաստերային վերլուծության ժամանակ: Վերլուծության արդյունքները ներկայացված են նկար 1-ում, որտեղից երևում է, որ սահմանադրականության միջին մակարդակ ունեցող երկրների կլաստերում Հայաստանը ունի ժողովրդավարական զարգացումների ցուցիչի տվյալ կլաստերի համար միջինից ցածր ցուցանիշ: Սահմանադրականության բարձր մակարդակով կլաստերի միջին ցուցանիշների համեմատ առավել մեծ տարբերություններ կան ինստիտուցիոնալ զարգացման մակարդակի և քաղաքական կայունության ցուցիչների մասով:



Ծանոթություն. հաշվարկները կատարվել են Հարությունյան Գ. Գ., Սարգսյան Հ. Լ., Գևորգյան Ռ. Ա.: «Սահմանադրականություն. փնտրողչման, մշտադիտարկման և կառավարման խնդիրներ», Եր., «Ձանգակ -97» ՍՊԸ, 2017, էջ 28-ում ներկայացված մեթոդաբանությամբ:

Նկար 1. Անցումային երկրներում սահմանադրական կայունության ցուցիչների մակարդակը՝ արտահայտված կլաստերներով

Ատենախոսության երկրորդ «Սեփականության կառավարման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում» գլխում հեղինակը քննարկել է սեփականության իրավունքների բազմազանեցման և ապակենտրոնացման գործընթացը ՀՀ-ում, որի արդյունքում ձևավորվեց սեփականության ներկայիս կառուցվածքը: Աշխատանքի այս մասում ներկայացվել են պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության մշտադիտարկման արդյունքները՝ վերջին տարիների համար, ինչպես նաև վերհանվել են պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում սեփականության կառավարման հիմնախնդիրները:

1990-ականների առաջին կեսին սկզբնավորված բարեփոխումներով պետական սեփականությունից անցում կատարվեց մասնավոր և խառը սեփականության՝ ակնկալելով ազատ հասարակությունում գործող սեփականատերերի տնտեսվարում: Սակայն նկատենք, որ «արդյունավետ սեփականատերերի» գաղափարի կենսագործումը չունեցավ սպասվելիք զանկալի արդյունքը այն հաշվով, որ հետագայում լիարժեք կգործեր կապիտալի շուկան և որը հանգեցրեց կորպորատիվ կառավարման ցածր արդյունավետության:

Հայաստանում վարչաիրամայական տնտեսությունից ազատ շուկայական հարաբերությունների անցման ժամանակահատվածում սոցիալ-տնտեսական բարեփոխումների առանցքային ուղղություններից մեկը հանրապետությունում գերիշխող պետական սեփականության փոխարեն բազմակացութաձև տնտեսության ձևավորումն էր, առավելապես մասնավոր սեփականության գերիշխմամբ: ՀՀ-ում մասնավորեցման գաղափարախոսության հիմքում դրվեցին մի շարք առաջնահերթություններ, որոնց հիման վրա ձևավորվեց մասնավորեցման գործընթացի հետևյալ տրամաբանական հերթագայությունը. հող, գյուղմթերք (հողի սեփականաշնորհում), մթերքի վաճառք (առևտրի օբյեկտների սեփականաշնորհում), մթերքների վերամշակում (սննդի և թեթև արդյունաբերության ձեռնարկություններ) և ապա՝ խոշոր արդյունաբերություն:

Անցումը ազատ շուկայական հարաբերությունների ՀՀ-ում իրականացվեց երեք համապետական ծրագրերի միջոցով. հողի և գյուղատնտեսական տեխնիկայի մասնավորեցմամբ, բնակարանային ֆոնդի սեփականաշնորհմամբ, ինչպես նաև պետական գույքի մասնավորեցման ճանապարհով: Վերջին ծրագիրն առանցքային դարձավ տնտեսությունում մասնավոր սեփականության իրավունքի լիարժեք գործածումն ապահովելու տեսանկյունից: Պետական

ձեռնարկությունների մասնավորեցման հիմնական ձև ընտրվեց դրանց բաժնետիրացումը, որի միջոցով միջին և խոշոր ձեռնարկությունների մեծ մասը վերակազմավորվեց բաժնետիրական ընկերությունների¹²: Բավական է նշել, որ այդ ժամանակահատվածում (մինչև 2000թ.) ՀՀ-ում ձևավորվեց ավելի քան 1 մլն 400 հազար սեփականատեր, որից 235 հազարը հողի և գյուղատնտեսական տեխնիկայի, շուրջ 480 հազարը՝ բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման արդյունքում, 80 հազարը՝ այգեգործական հողամասերի, 2 հազարը՝ մշակույթի գործիչների զբաղեցրած արվեստանոցների, 100 հազարը՝ «փոքր» օբյեկտների և ավելի քան 530 հազարը՝ միջին և խոշոր ձեռնարկությունների մասնավորեցման շնորհիվ:

Պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից իրականացվող՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների ենթակայության պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական ցուցանիշների դիտարկումների և վերլուծության (մոնիտորինգի)¹³ 2020 թվականի տարեկան արդյունքներով վերլուծություն է իրականացրել ՀՀ կառավարության, ՀՀ նախարարությունների, դրանց ենթակա մարմինների, ՀՀ մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի, ինչպես նաև ՀՀ հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդի (ընդամենը 25 մարմինների) ենթակայության ընդհանուր թվով 153 պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններից 148-ի համար:

Կատարված վերլուծության արդյունքները վկայում են, որ 2020 թ. -ի տարեկան արդյունքներով 148 ընկերություններից 97-ը (կամ ընդհանուր թվի 65,5%-ը) աշխատել են շահույթով (նախորդ տարի 150 վերլուծության ենթարկված առևտրային կազմակերպությունից շահույթով են աշխատել 122-ը կամ կամ 81,3%-ը), 43 ընկերություններ (կամ 29,1%-ը) աշխատել են վնասով (նախորդ տարի վնաս են ձևավորել 23-ը կամ կամ 15,3%-ը), իսկ 8 ընկերություն (կամ 5,4%-ը) 2020 թ. -ին շահույթ կամ վնաս չեն ձևավորել:

Կազմակերպությունների 2020թ. -ի գործունեության արդյունքում ձևավորվել է 40645 մլն դրամ վնաս, մինչդեռ 2019 թ. -ի տարեկան տվյալներով վնասը կազմում էր 11352 մլն դրամ: Այսինքն, վնասի ծավալը նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատ ավելացել է մոտ 29293 մլն դրամով, որը

¹² Ավելի մանրամասն տե՛ս, մասնավորապես, Ա. Խ. Մարկոսյան. «Բաժնետիրացման մեխանիզմը և դրա բաղկացուցիչ մասերը (խորհուրդներ ապագա բաժնետերերին)», Եր., «Հակոբ Մեղակյարտ» տպագրատուն., 1995թ., 80 էջ և Ա.Խ.Մարկոսյան. «Պետական ձեռնարկությունների ապապետականացման կառավարում. մեթոդաբանություն, ռազմավարություն և արդյունքներ», Եր., «Լույս», 1997թ., 446 էջ:

¹³ Մոնիտորինգի իրականացման համար հիմք է հանդիսանում ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1262-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների կողմից 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումներ անցկացնելու, դրանց գործունեությունը վերլուծելու և արդյունքներն ամփոփելու» կարգը:

հիմնականում պայմանավորված է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի ոլորտի կազմակերպությունների կողմից ձևավորած 36334,4 մլն դրամ ձևավորված վնասով, քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կազմակերպությունների կողմից ձևավորած 901,8 մլն դրամ վնասով, Երևանի քաղաքապետարանի «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ձևավորած 1220 մլն դրամ վնասով:

2020թ. տարեկան տվյալներով պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ընդամենը ակտիվները կազմել են 736 216,8 մլն դրամ, իսկ վերլուծության ենթարկված բոլոր 148 կազմակերպությունների ակտիվների շահութաբերության միջին մակարդակը կազմել է 0,602%: Ըստ ոլորտների այդ ցուցանիշի մեծություններն են՝ առողջապահության ոլորտի (ՀՀ առողջապահության նախարարություն և ՀՀ մարզպետարաններ) 91 կազմակերպությունների ակտիվների շահութաբերության միջին մակարդակը տոկոսային արտահայտությամբ կազմել է 0,799%, էներգետիկայի ոլորտի կազմակերպությունների համար՝ -1,233%, ջրային ոլորտի կազմակերպությունների համար՝ -0.267%, էկոնոմիկայի բնագավառի կազմակերպություններինը՝ 1.749%, պաշտպանության ոլորտի կազմակերպությունների համար՝ 4.611%, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտի կազմակերպությունների համար՝ -0,657%:

ՀՀ-ում գրանցված պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների թիվը, հեղինակի հաշվարկներով, գերազանցում է 5200-ը: 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցված ՊՈԱԿ-ների թիվը 1869-ն էր, ՀՈԱԿ-ներինը՝ 1403 և հիմնարկներինը՝ 1925¹⁴:

Ատենախոսության մեջ ուսումնասիրություն է իրականացվել պետական ոչ առևտրային կազմակերպությունների (ՊՈԱԿ) շրջանում՝ իրենց առջև ծառայած խնդիրները նկարագրելու, օրենսդրության խնդրահարույց դրույթները բացահայտելու և ՊՈԱԿ-ների (ՀՈԱԿ-ների) կառավարման մոդելի բարելավման հնարավորությունները պարզելու համար: Ուսումնասիրությունը կատարվել է հետևյալ փաստաթղթերի հիման վրա՝

- առաջիկա 3-5 տարիների համար կազմված ռազմավարական պլանը,
- 2017-2019 թվականների ֆինանսական հաշվետվությունները՝ պետական բյուջեից հատկացումները և այլ աղբյուրներից ստացված եկամուտները,
- ՀՀ կառավարության կողմից տրամադրված այլ ֆինանսավորումը՝ առանձին ծրագրերի իրականացման համար,

¹⁴ Աղբյուրը՝ ՀՀ արդարադատության նախարարություն, 12.12.2021թ. -ի դրությամբ տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղմամբ.
<https://www.moj.am/legal/view/article/1193/>

➤ հիմնական միջոցների և գործառնական նշանակություն ունեցող ակտիվների ցանկը,

➤ ՊՈԱԿ-ի կանոնադրությունը և կազմակերպական կառուցվածքը,

➤ վերջին երկու տարիների համար մշակված ծրագրերը, ինչպես նաև հաջորդ տարվա ծրագիրը,

➤ վերջին երեք տարիների ոչ ծրագրային գործունեությունը (միջոցառումները, արտասահմանյան այցելությունները, այլ):

Դիտարկման ենթակա հիմնախնդիրները հետևյալն են՝

1. օրենսդրական / կարգավորող (ներառյալ վարչական առաջադրանքները և կանոնակարգերը),

2. կառավարության հասանելի աջակցության ձևերը և չափերը,

3. հասանելի ենթակառուցվածքը,

4. ստեղծագործական գործունեությունը, արտադրության (ծառայությունների) կառուցվածքը, կառավարման մոդելները (ներկայիս և ցանկալի),

5. աշխատակազմի հմտությունների բացերը և կարիքները,

6. հասանելի տեղեկատվական հարթակներ և կապեր (ներքին և միջազգային, ընթացիկ և ցանկալի):

Ատենախոսության երրորդ՝ **«Սեփականության կառավարման և տնտեսաիրավական կարգավորման ուղիները Հայաստանի Հանրապետությունում»** գլխում ներկայացվել են սեփականության իրավունքի ինստիտուտի կայացման և բարելավման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Այնուհետև հեղինակը ներկայացրել է կազմակերպություններում սեփականության կառավարման արդյունավետության գնահատումը ու պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում տնտեսաիրավական կարգավորման գործիքների ներդրման վերաբերյալ մոտեցումները:

Սեփականատիրական հարաբերությունների կարգավորման գործում առանձնանում է սեփականության իրավունքների պաշտպանությունը, որի վերաբերյալ իրականացվել են բազմաթիվ հետազոտություններ: Ըստ որում, այդ հետազոտություններում կիրառվում են սեփականության իրավունքների պաշտպանվածության չափման տարբեր մեթոդաբանություններ: «Սեփականության իրավունքների միջազգային ինդեքսը» (կամ «International Property Rights Index» - IPRI, հայերեն՝ ՍԻՄԻ) ուսումնասիրում է և, օրինակ, 2020 թվականի զեկույցում համեմատում է 129 երկրներում¹⁵ սեփականության իրավունքների պաշտպանվածության իրավիճակը: Սեփականության իրավունքի միջազգային ամփոփ ինդեքսը իր մեջ ներառում է՝ իրավական և քաղաքական

¹⁵ Տարեց-տարի IPRI զեկույցում ներառված երկրների թիվը ավելանում է, 2020թ. -ի համար հաշվարկված ինդեքսի մեջ ընդգրկվել է երկու երկիր, որոնք 2019թ. -ին չէին ներառված՝ Գաբոնը և Մադագասկարը, մինչդեռ այլ երկու երկրներ՝ Լիբերիան և Սիերա Լեոնեն, որոնք անցյալ տարի ինդեքսի մաս էին կազմում, 2020 թ. -ի զեկույցի մեջ ներառված չեն:

միջավայրը, ֆիզիկական սեփականության իրավունքները և մտավոր սեփականության իրավունքները:

2020 թվականին 129 երկրների համար ՍԻՄԻ միջին ցուցանիշը կազմել է 5.728, որտեղ ամենաթույլը իրավական և քաղաքական միջավայրը բնութագրող բաղադրիչն է՝ 5.140 միավոր: Ընդ որում, նախորդ տարվա (2019թ. -ին՝ 5.160) համեմատ այս ցուցանիշը նվազել է, ինչը մտահոգության առիթ է տալիս: Կախված լինելով դատական համակարգի գործունեությունից, երկրներում քաղաքական կայունությունից և կոռուպցիայի դրսևորումներից, այս բաղադրիչի արժեքների նվազումը թույլ է տալիս եզրակացնել, որ ընդհանուր առմամբ, երկրների քաղաքական իշխանությունները չեն պատրաստվում թուլացել իրենց բացասական «վերահսկողությունը» սեփականության իրավունքների նկատմամբ:

ՍԻՄԻ երեք բաղադրիչներից ամենաբարձր արժեքները բոլոր տարիներին ունեցել են ֆիզիկական սեփականության իրավունքները բնութագրող ցուցանիշները (2016թ.՝ 5.875-ից մինչև 2020թ.՝ 6.500-ը): Պետք է նշել, որ մտավոր սեփականության¹⁶ իրավունքների ավելի թույլ պաշտպանվածությունը համընդհանուր բնույթ է կրում՝ հաշվի առնելով իրավունքների այս տեսակի առանձնահատկությունները հաշվառման, գնահատման և առևտրայնացման ոլորտներում: Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, ապա մտավոր սեփականության իրավունքների հետ կապված հիմնախնդիրը շատ ավելի սուր է դառնում: Նախկին Խորհրդային Միության 10 երկրների շարքում ՀՀ-ում ՍԻՄԻ-ի մեծությամբ առաջնային դիրքեր չի զբաղեցնում (6-րդը 10 երկրների մեջ, Հայաստանից հետո են մնում միայն Ռուսաստանը, Ուկրաինան և Մոլդովան), ըստ որում նկատելիորեն զիջում է ինչպես Վրաստանին, այնպես էլ Ադրբեջանին: ՍԻՄԻ միջերկրային համադրությունները վկայում են, որ սեփականության իրավունքների բարելավման տեսանկյունից Հայաստանում անհրաժեշտ է իրականացնել գործուն և արդյունավետ միջոցառումների ծրագիր, ինչը հնարավոր կդարձնի ՀՀ դիրքերի նկատելի առաջխաղացում՝ հատկապես տարածաշրջանի մյուս երկրների նկատմամբ:

Ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ սեփականության իրավունքների պաշտպանվածության փաստը ուղղակիորեն կապված է երկրի տնտեսական ներուժից: Այն երկրներում, որտեղ սեփականության իրավունքների պաշտպանվածության ցուցանիշները բարձր են, բարձր է նաև շնչային եկամուտների մակարդակը, ինչը նշանակում է, որ սեփականության իրավունքների պաշտպանվածությունը լուրջ երաշխիք և նաև անհրաժեշտ պայման է բնակչության եկամուտների ավելացման համար, կամ այլ կերպ ասած, այն տնտեսա-իրավական առանցքն է, որն ապահովում է զարգացման ներառական աճը: Այսպես, 2020 թ. -ին աշխարհում բնակչության մեկ շնչի հաշվով եկամուտների միջին մեծությունը ըստ սեփականության իրավունքների

¹⁶ Մտավոր սեփականության օբյեկտներն են՝ մարդու մտավոր ունակությունների գործադրման հետևանքով ստեղծված արդյունքը, ներառյալ գյուտերը, գրական և գեղարվեստական ստեղծագործությունները, արտոնագրերն ու ալյարանքային նշանները, որոնք օգտագործվում են առևտրային նպատակներով:

պաշտպանվածության ցուցանիշի դասակարգված առաջին (լավագույն) քվինտիլում 16 անգամ գերազանցում է հինգերորդ (վատագույն) քվինտիլի երկրների ցուցանիշը: Նույն անհավասարությունը եղել է նաև 2019 թվականին, սակայն այն բարելավվել է 2015 թ.-ի համեմատ, երբ ուսումնասիրվող ցուցանիշների տարբերությունը գրեթե 24 անգամ էր: Հատկանշական է, որ այդ տարբերությունը 2010 թ. -ին կազմում էր 8 անգամ:

Առևտրային կազմակերպությունների համար ծրագրային ցուցանիշներ պետք է համարվեն պետական գույքի կառավարման գործող ծրագրին¹⁷ համապատասխան տվյալ առևտրային կազմակերպության համար կազմված գործարար ծրագրով¹⁸ նախատեսված ծրագրային ցուցանիշները:

Պետական լիազորված մարմինը, ներկայացված տեղեկատվությունն ուսումնասիրելուց հետո, պետք է՝

➤ գնահատման համար կիրառվող ցուցանիշների 20%-ից ավելի չափով բացասական շեղումներ արձանագրելու դեպքում՝ հիմնադրի անունից լիազորված համապատասխան պետական մարմնից պարզաբանում պահանջի,

➤ գնահատման համար կիրառվող ցուցանիշների 20%-ից ավելի չափով բացասական շեղումը երկրորդ անգամ կրկնվելու դեպքում՝ հիմնադրի քննարկմանը ներկայացնի առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների ղեկավարներին զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին հարցը:

Ելնելով տարեկան ցուցանիշների գնահատման արդյունքներից, կազմակերպության գործադիր մարմինների ղեկավարների համար, հեղինակի կարծիքով, կարող են կիրառվել խրախուսում կամ կարգապահական հետևյալ տույժերը՝

➤ եթե կազմակերպության արդյունավետությունը գնահատվել է դրական և եռամսյակային տվյալներով ապահովվել է գնահատման համար նախատեսված ցուցանիշների աճ, ապա կազմակերպության գործադիր մարմինների ղեկավարների նկատմամբ կիրառվում է ՀՀ օրեսրոությանմ սահմանված լրացուցիչ խրախուսում,

➤ եթե կազմակերպության արդյունավետությունը գնահատվում է բավարար, սակայն եռամսյակային տվյալներով ապահովվել է գնահատման համար նախատեսված ցուցանիշների աճ, ապա կազմակերպության գործադիր

¹⁷ Ներկայում գործում է պետական գույքի կառավարման 2021-2023 թվականների ծրագիրը, որը հաստատվել է ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 1-ի «Պետական գույքի կառավարման 2021-2023 թվականների ծրագիրը հաստատելու մասին» N 458-Լ որոշմամբ, տես՝ Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական՝ www.arlis.am կայքում:

¹⁸ Գործարար ծրագրի օրինակելի ձևը հաստատվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի 2017 թվականի հոկտեմբերի 3-ի «50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների եռամսյա զարգացման գործարար ծրագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» N 139-Ն հրամանով, տես՝ Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական՝ www.arlis.am կայքում:

մարմինների ղեկավարների նկատմամբ կարող են կիրառվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված խրախուսման միջոցառումներ,

➤ եթե կազմակերպության արդյունավետությունը գնահատվել է պայմանականորեն բավարար, իսկ գնահատման համար նախատեսված ցուցանիշների աճ չի ապահովվել, ապա գործադիր մարմինների ղեկավարների հետագա պաշտոնավարման շարունակման համար հիմք են ընդունվում նախորդ երկու տարիների ցուցանիշները, ուստի և դրանցից ելնելով կայացվում է սույն մասում առաջարկվող որոշումներից մեկը,

➤ եթե կազմակերպության արդյունավետությունը գնահատվել է բացասական և գնահատման համար նախատեսված ցուցանիշների աճ չի ապահովվել, ապա հիմնադրի քննարկմանն է ներկայացվում կազմակերպության գործադիր մարմնի ղեկավար(ներ)ին զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին հարցը:

Պետական (համայնքային) ոչ առևտրային կազմակերպությունների վերաբերյալ աշխատանքում ներկայացված մոտեցումների և սկզբունքների կիրառման արդյունքում հնարավոր կլինի ձևավորել այնպիսի համակարգ, որը կապահովի մի կողմից՝ առևտրային կազմակերպություններին բնորոշ ծառայությունների (ինչպիսիք են՝ կառավարչական և ֆինանսա-տնտեսական գործառնությունները) իրականացումը, մյուս կողմից՝ ստեղծագործական ազատությունների ընդլայնումը և ստեղծագործական անձնակազմին լայն հնարավորությունների ընձեռումը՝ միայն մասնագիտական գործունեությամբ զբաղվելու համար՝ ազատելով վարչական ու կառավարչական գործառնություններից: Բացի նշվածից, հնարավորություն է ստեղծվում կազմակերպության մասնագիտական ուղղվածությունը ոչ բնորոշ ծառայությունները արտապատվիրակել (առթուրսինգ իրականացնել) այլ կազմակերպություններին:

Այլ կերպ, խոսքը «հիբրիդային» նոր տեսակի կազմակերպա-իրավական կարգավիճակ ունեցող կազմակերպության ստեղծման հայեցակարգի մասին է, որը լավագույնս իր մեջ կարտացոլի այդ ոլորտի պետական կարգավորման հնարավորությունները կամ, որը նույնն է, սեփականատիրոջ իրավունքների իրացումը:

Սեփականության կառավարման հարաբերությունների ոլորտում ատենախոսության շրջանակում իրականացված վերլուծությունների և ուսումնասիրությունների հիման վրա աշխատանքում կատարվել են մի շարք հետևություններ, որոնց արդյունքները ամփոփ կերպով արտացոլված են հետևյալ հատկանշական **եզրակացություններում**:

1. Սեփականության հասկացության զարգացման և ժամանակակից ընկալման հիմքում ոչ այնքան որևէ բարիքի յուրացման կապակցությամբ օբյեկտիվորեն ձևավորվող հարաբերություններն են, որքան սեփականության իրավունքների երաշխավորումն է, դրանից ծագող իրավունքների պաշտպանությունը, ինչպես նաև սեփականության տնօրինման այնպիսի կառուցակարգերի ձևավորումը, որոնք կապահովեն սեփականության բոլոր

սուբյեկտների կողմից իրենց տնտեսական շահերի հնարավորինս ամբողջական իրացումը:

2. Նոր ինստիտուցիոնալիզմի շրջանակներում ձևավորված սեփականության իրավունքի տեսությանը սեփականությունը դիտարկում է որպես իրավասությունների փունջ, որի մեջ մտնում են՝ տիրապետման, օգտագործման, կառավարման, օգուտներ ստանալու, անվտանգության իրավունքները, ժառանգություն փոխանցելու իրավունքը, բարիքի անժամկետ տիրապետման և տնօրինման իրավունքը, վնասակար օգտագործման արգելքը, պատասխանատվության իրավունքը և վեջնական (մնացորդային) բնույթի իրավունքը: Սեփականության իրավունքի փունջը սահմանում է այն սկզբունքները, որոնցով կարգավորվում է ռեսուրսների օգտագործումն ըստ դրանց նպատակահարմարության, որի հիմքը տնտեսական արդյունավետության ապահովման անհրաժեշտությունն է:

3. Սեփականության իրավունքը հանդիսանում է սեփականության տնտեսական հարաբերությունների ոչ միայն արդյունքը, այլև նախադրյալը: Այն դիտարկվում է որպես նախադրյալ այն առումով, որ տնտեսվարող սուբյեկտները տնտեսական հարաբերություններ նախաձեռնելիս հաշվի են առնում վերջիններիս որոշակի վարքագիծ թելադրող իրավական դաշտի առկայությունը: Գիտատեխնիկական և սոցիալական առաջընթացը, ինչպես նաև այլ գործոնների ազդեցությամբ օբյեկտիվորեն փոփոխվող տնտեսական հարաբերությունները պահանջում են իրավունքների շրջանակների ընդլայնում կամ դրանց փոփոխում, եթե վերջիններս չեն արտացոլում փոփոխված իրավիճակը և արգելակում են տնտեսության զարգացումը:

4. Հայաստանի Հանրապետությունում և անցումային մյուս երկրներում սահմանադրականության մակարդակի որոշման համար օգտագործվել է միջազգային կազմակերպությունների կողմից հաշվարկվող տարբեր ցուցիչների համակարգը, որը ներառում է՝ քաղաքացիական հասարակության, քաղաքական բազմակարծության, խոսքի և դավանանքի ազատության, ընկերությունների և կազմակերպությունների իրավունքի, ընտրական գործընթացը բնութագրող, խոսքի իրավունքի և հաշվետվողականության, անհատական ինքնավարության և անձի իրավունքի, ՁԼԸ-ների անկախության, կառավարության արդյունավետության, սեփականության իրավունքի պաշտպանվածության, իրավունքի գերակայության, կոռուպցիայի ընկալման համաթվի և կարգավորման որակի ցուցիչները (համաթվերը): Դրանցից յուրաքանչյուրը, իր հերթին, հաշվարկվում է բազմաթիվ այլ գործոնների (ենթացուցիչների) կիրառմամբ և ըստ էության իրենից ներկայացնում է որոշակի գործընթացի ընդհանրական ինդեքս: Սահմանադրականության մակարդակի հաշվարկման համար առանձնացված նշված ցուցիչները պայմանականորեն բաժանված են երեք խմբի՝ իրավական պետության, ժողովրդավարության մակարդակը բնորոշող և սոցիալ-տնտեսական զարգացման բնութագրիչների:

5. Սահմանադրականության ինտեգրալ մակարդակը հաշվարկվել է իրավական պետության և ժողովրդավարական զարգացումների

բնութագրիչների հիման վրա, իսկ սոցիալ-տնտեսական ցուցիչները օգտագործվել են անցումային երկրները ըստ սահմանադրականության մակարդակի կլաստերների բաժանելու համար: Գործոնային վերլուծության արդյունքում հայտնաբերվել են 2 չբացահայտված (լատենտ) գործոններ, որոնք պայմանականորեն անվանվել են՝ 1) երկրների ժողովրդավարական զարգացման գործոն և 2) երկրների ինստիտուցիոնալ զարգացման գործոն:

Կատարված վերլուծության արդյունքները վկայում են ՀՀ սահմանադրականության մակարդակի կախվածության մասին իրավական պետության և երկրի ժողովրդավարական զարգացումները բնութագրող գործոններից (ցուցիչներից). և՛ 2017, և՛ 2021 թվականների համար կատարված հաշվարկները վկայում են բարձր կախվածության, ուստի և՛ ստացված արդյունքների հավաստիության մասին:

Հայաստանը, ըստ հաշվարկների, հայտնվել է սահմանադրականության միջին մակարդակ ունեցող երկրների կլաստերում և ունի ժողովրդավարական զարգացումների ցուցիչի տվյալ կլաստերի համար միջինից ցածր ցուցանիշ:

6. Պետության՝ որպես մակրոտնտեսական մակարդակում սոցիալ-տնտեսական իրավիճակի կարգավորման հատուկ կարգավիճակ ունեցող սուբյեկտի, միևնույն ժամանակ՝ գործատուների և վարձու աշխատողների միջև սոցիալական գործընկերության սուբյեկտի, ձեռնարկատիրական գործունեությունն ունի մի շարք առանձնահատկություններ:

Նախ, ինքը սեփականատերը ուղղակիորեն առևտրային գործունեությամբ չի զբաղվում: Նա կամ հիմնադրում է համապատասխան տնտեսական կազմակերպություններ կամ էլ իրեն պատկանող գույքի և ոչ նյութական ակտիվների օգտագործման և տիրապետման իրավունքները փոխանցում է մասնավոր տնտեսավարող սուբյեկտներին՝ որոշակի պայմաններով:

Երկրորդ, պետությունն իր կապիտալի կառավարմամբ լուծում է ռազմավարական խնդիրներ: Այսպես, ստեղծելով առևտրային կամ ոչ առևտրային կազմակերպություն, պետությունը սովորաբար սահմանափակվում է ոլորտի ընտրությամբ և կազմակերպության գործունեության ուղղությունների սահմանմամբ, ղեկավարի նշանակմամբ, ֆինանսավորման աղբյուրները որոշելով, սեփականատիրոջ և տնտեսավարող սուբյեկտների միջև ստացված եկամուտների բաշխման կարգի սահմանմամբ:

Երրորդ, պետական կապիտալի (պետության կողմից ներդրված գույքի) շահութաբերությունը հաջող գործարարության միակ չափանիշը չէ: Պետությունը պատասխանատու է ոչ միայն տնտեսությունում իր հատվածի, այլ նաև ամբողջ տնտեսության համար: Հետևաբար, էական նշանակություն ունեն նաև մյուս կարևոր խնդիրների լուծումները՝ տնտեսական (օրինակ, փոքր և միջին ձեռնարկատիրության ֆինանսական աջակցությունը, թույլ զարգացած մարզերի և բնակավայրերի զարգացումը, ենթակառուցվածքների բնականոն գործունեության ապահովումը և այլն) և սոցիալական (աշխատատեղերի թվի պահպանումը և ավելացումը, կայուն և անվտանգ շրջակա միջավայրի

ապահովումը, սոցիալական ծառայությունների շրջանակի ընդլայնումն ու այդ ծառայությունների ստանդարտների ապահովումը և այլն):

7. Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերլուծությունը վկայում է շահույթով աշխատող ընկերությունների թվի նվազման (2019թ. -ի 81,3%-ի փոխարեն 2020թ. -ին այդպիսի ընկերությունները ընդամուր թվի մեջ կազմել են 65,5%) և վնասով աշխատող ընկերությունների թվի ավելացման (2019թ. -ի 15,3%-ից 2020թ. -ին այդպիսի ընկերությունները թիվն աճել է մինչև 29,1%): Ընդ որում, ավելացել է ոչ միայն պետական հատվածի վնասով աշխատող ընկերությունների թիվը, այլև շեշտակիորեն աճել է դրանց ձևավորած վնասի մեծությունը. եթե 2019 թ.-ի տարեկան տվյալներով վնասը կազմում էր 11352 մլն դրամ, ապա ուսումնասիրության վերջին՝ 2020թ. -ի տարեկան գործունեության արդյունքներով ձևավորվել է 40645 մլն դրամի վնաս: Այսինքն, վնասի ծավալը նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատ ավելացել է մոտ 29293 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է << տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի ոլորտի կազմակերպությունների կողմից ձևավորած 36334,4 մլն դրամ ձևավորված վնասով, քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կազմակերպությունների կողմից ձևավորած 901,8 մլն դրամ վնասով, Երևանի քաղաքապետարանի «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ձևավորած 1220 մլն դրամ վնասով: Եվ սա տնտեսության այն ոլորտների ընկերություններն են, որտեղ մասնավորները աշխատում են շահութաբերությամբ:

8. Կարող ենք ամփոփել, որ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական ցուցանիշների մշտադիտարկումը չի ծառայում այն նպատակին, որի համար այդ պրակտիկան ներդրվել է: Այն ոչ մի կերպ չի խթանում կազմակերպությունների գործունեության բարելավումը և, որպես հետևանք, բաժնետոմսերում (բաժնեմասերում) ներդրված պետական գույքի օգտագործումից առավելագույն օգուտ ստանալու սեփականատիրոջ հնարավորությունը կամ՝ տնտեսական շահերի իրացումը (եթե իհարկե նման նպատակներ սահմանված են կազմակերպությունների հիմնադրման մասին որոշումներով և հիմնադիր փաստաթղթերով): Բացի այդ, ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների ամփոփման ժամկետները լիազորված մարմնի կողմից (այն իրականացվում է մինչև հաջորդ տարվա մայիս ամիսը) թույլ չեն տալիս օպերատիվորեն կատարել տարեկան ցուցանիշների համեմատական վերլուծությունը, և որպես հետևանք՝ տարվա առաջին ամիսների ընթացքում առաջարկություններ մշակել առևտրային կազմակերպությունների գործունեության բարելավման վերաբերյալ:

9. Պետական ձեռնարկատիրության կարևոր ուղղություններից է ինստիտուցիոնալ վերափոխումը՝ այն խնդիրների ցանկի էական ընդլայնումը, որոնք մտնում են պետական կառավարման մարմինների իրավասության մեջ: Այդպիսիք պետք է դառնան հետևյալ աշխատանքները.

➤ տեղեկատվական-վերլուծական (այն ձեռնարկությունների մշտական դիտարկումների (մոնիտորինգի) անցկացումը, որտեղ կա պետական կապիտալ, ձեռնարկության զարգացման միտումների բացահայտում, որոնք նման են ճյուղային պատկանելիության, գործունեության պրոֆիլի և չափերի տեսանկյունից, նրանց գործունեության արդյունքները որոշող գործոնների և պայմանների գնահատումը),

➤ նորմատիվային (պետական գերակշռող բաժնեմաս ունեցող ձեռնարկությունների եկամուտների բաշխման ոլորտում քաղաքականության սկզբունքների, տարբեր տեսակի պետական ձեռնարկությունների գործունեության գնահատման չափանիշների սահմանում, պետության ֆինանսական աջակցության տրամադրման պայմանների մշակում),

➤ ձեռնարկատիրական՝ պետական բաժնեմասերի (բաժնետոմսերի) վաճառքը, մասնավոր թողարկողներից բաժնետոմսերի գնումը, մասնավոր կապիտալի հետ (համատեղ) առանձին ներդրումային նախագծերի ֆինանսավորումը և այլն):

10. Հետազոտության արդյունքները թույլ են տալիս ձևակերպել պետական (համայնքային) ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության բարելավման հետևյալ ուղղությունները՝

➤ պետական (համայնքային) ոչ առևտրային կազմակերպությունների հիմնական գործունեությունը պետք է տարանջատվի մասնագիտական և օժանդակ գործունեության և հնարավորություն ընձեռնվի օժանդակ գործունեությունը արտապատվիրակելու (աութօրսինգ) այլ առևտրային կազմակերպություններին (որոնք, իհարկե, ունեն համապատասխան աշխատանքներ կատարելու փորձառություն),

➤ թույլատրել պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից պետական գույքի օգտագործման թույլտվությունների տրամադրումը այլ անձանց՝ համապատասխան կանոնակարգի շրջանակներում,

➤ դիտարկել դոնոր կազմակերպությունների կողմից ՊՈԱԿ-ների տրամադրվող նվիրատվությունների հարկազատման հնարավորությունը,

➤ արտաբյուջետային միջոցները գանձապետական հաշվին ամենօրյա ռեժիմով մուտքագելու վերաբերյալ գործող կարգավորումների պարզեցում,

➤ հաշվի առնել ստեղծագործական անձնակազմի աշխատանքային հարաբերությունների առանձնահատկությունները՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքով համատեղությամբ կատարվող աշխատանքի նկատմամբ կիրառվող կարգավորումների տեսանկյունից,

➤ ստեղծագործական անձնակազմի մասնագիտական գնահատումը իրականացնել զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին համապատասխանության տեսանկյունից,

➤ թույլատրել մեկ անձից՝ կանխիկ դրամով հրատապ համարվող գնումների իրականացումը անհաղթահարելի ուժի առկայության դեպքում:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. **Մխիթարյան ժ., Նահապետյան Ս.** «Սահմանադրական տնտեսագիտություն. Առարկայական տիրույթը և ուղղությունները», «Ֆինանսներ և էկոնոմիկա», № 9-10 (171-172) սեպտեմբեր-հոկտեմբեր 2014թ. , էջ 31-34:

2. **Նահապետյան Ս.** «Սահմանադրականության բնութագիրը. Համեմատական վերլուծություն երկրների կտրվածքով», «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները և առաջնահերթությունները» գիտաժողովի նյութերի ժողովածու // Եվրասիա միջազգային համալսարան, Երևան, 2014թ., էջ 308-318:

3. **Սարգսյան Հ., Մխիթարյան ժ., Նահապետյան Ս.** «Սահմանադրականության հարացույցը. Տնտեսագիտական առումները, գնահատման հիմնահարցերը», «Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», № 2 (17), 2015թ. , էջ 36-51:

4. **Նահապետյան Ս.** «Սեփականության իրավունքի պաշտպանվածությունը՝ որպես սահմանադրականության սոցիալ-տնտեսական ցուցիչ», «Այլընտրանք» գիտական հանդես, № 4, 2016թ. , էջ 236-250:

5. **Ղանթարջյան Ս., Նահապետյան Ս.** «Սեփականության իրավունքների պաշտպանությունն ինովացիոն նախագծերում», «Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», № 2 (20), 2016թ. , էջ 67-73:

6. **Саркисян Г., Мхитарян Ж., Нагапетян С.** «Конституционализм в контексте конституционной экономики», Актуальные проблемы экономической теории и практики, Сборник научных трудов, Кубанский Государственный Университет, № 19, 2015г., стр. 33-42.

7. **Նահապետյան Ս.** «Ֆիզիկական, մտավոր և կորպորատիվ սեփականության պաշտպանվածությունը ՀՀ-ում», «Ֆինանսներ և էկոնոմիկա», № 3-4 (199-200), 2017թ. , էջ 132-137:

8. **Նահապետյան Ս.** «Սեփականության իրավունքի ինստիտուտի կայացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», «Պատմություն և քաղաքականություն» գիտական հանդես, № 4 (15), 2021թ. , էջ 178-199:

НАГАПЕТЯН СЕДА САМВЕЛОВНА

ПУТИ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ УПРАВЛЕНИЯ СОБСТВЕННОСТЬЮ В КОНТЕКСТЕ КОНСТИТУЦИОННОСТИ (НА ПРИМЕРЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ)

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – “Экономика, управление хозяйством и его отраслями”.

Защита диссертации состоится 13-ого мая 2022г. в 15:00, на заседании специализированного совета 015 ВАК Республики Армения по экономике, действующего в Ереванском государственном университете, по адресу: 0009, г. Ереван, ул.Х.Абовяна 52

Р Е З Ю М Е

Управление собственностью является ключевой и неотъемлемой функцией социально-экономической политики современного государства, где присутствует её двойная роль: с одной стороны – это собственник (в части государственного имущества, в том числе вложенного в уставной капитал коммерческих организаций и закрепленного за некоммерческими организациями на правах собственности), т.е. участник экономических процессов, с другой стороны государство является регулятором основных экономических процессов. Хотя в современном мире экономика большинства стран строится на доминировании частного (рыночного) сектора, все же трудно найти страну, где нет хотя бы малой доли государственных предприятий.

На данном этапе развития отношений собственности она трактуется как совокупность компетенций, на основе которых определяются принципы регулирования и процесс использования определенных ресурсов в соответствии с необходимостью обеспечения экономической эффективности.

Рыночные реформы проведенные в Республике Армения в 1990-х годах, коренным образом изменили структуру собственности в нашей стране (в результате реализации трех масштабных программ – приватизации земель сельскохозяйственного назначения, техники, жилого фонда и государственных предприятий), привели к формированию частной собственности, акционированию предприятий.

Государство может способствовать ускорению позитивных изменений в отношениях собственности, существенно повлиять на заинтересованность субъектов хозяйственной деятельности с государственным участием в повышении эффективности использования ресурсов, а также сориентировать эту деятельность в тех направлениях, которые отвечают как интересам самих организаций, так и общества в целом. Вышеказанным, а также многими другими факторами, обусловлена актуальность темы диссертации.

Целью диссертационной работы является разработка подходов и мер, направленных на совершенствование управления собственностью в Республике Армения с точки зрения конституциональности данного процесса. Для достижения поставленных в диссертации целей определены следующие задачи исследования:

- изучить теоретико-методологические основы формирования собственности, их развитие, современные трактовки прав собственности и реализации этих прав;
- изучить содержание собственности как экономической категории,

определение конституционности прав собственности и сравнительные характеристики, процесс управления собственностью;

➤ проанализировать процесс диверсификации и децентрализации прав собственности в Республике Армения, представить особенности этого процесса;

➤ изучить основные направления инвестирования государственного имущества, в связи с этим изучить вопросы управления имуществом в государственных коммерческих организациях, а также в государственных и муниципальных некоммерческих организациях;

➤ изучить проблемы становления института права собственности в Республике Армения и предложить пути совершенствования;

➤ предложить подходы к оценке эффективности управления собственностью в коммерческих организациях с государственным участием;

➤ предложить новые инструменты экономического и правового регулирования в государственных и муниципальных некоммерческих организациях.

Основные научные результаты исследования имеют теоретическое и практическое значение, научная новизна которых заключается в следующем:

1. В результате комплексного анализа теоретико-практических основ государственного управления экономикой выявлено соотношение и границы государственной собственности и государственного предпринимательства в экономике страны, предпосылки повышения эффективности управления ими, обосновано содержание инструментария управления собственностью в экономической политике.

2. Выявлены институциональные индикаторы, которые играют решающую роль в снижении дефицита конституционности, а также используются для кластеризации стран по критерию конституционности. К таким показателям относятся реализация прав собственности, уровень коррупции и др.

3. В результате анализа финансово-экономических результатов деятельности коммерческих организаций с государственным участием, реализации государством своих имущественных прав были выявлены негативные факторы, влияющие на качество управления государственным имуществом в РА и предложены меры, направленные на повышение эффективности этого процесса.

4. Предложены подходы к оценке деятельности коммерческих организаций с гос. участием в целях повышения уровня рентабельности государственных активов.

5. Изменение модели управления государственными некоммерческими организациями должно обеспечить наибольшую самостоятельность этих организаций, а также позволить внедрение бизнес ориентированных управленческих инструментов, характерных для коммерческих организаций.

SEDA SAMVEL NAHAPETYAN

**WAYS TO INCREASE THE EFFICIENCY OF PROPERTY MANAGEMENT IN
THE CONTEXT OF CONSTITUTIONALITY
(ON THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA)**

The dissertation is submitted for pursuing of scientific degree of PhD of economic sciences in the field 08.00.02 “Economics, Management of the Economy and its Branches”

The defense of the dissertation will take place at 15:00, on May 13th, 2022, at the Meeting of the Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University, by address:
0009, Yerevan, 52 Abovyan st.

ABSTRACT

Property management is a key function in the socio-economic policy of a modern state, where presents dual role of the government: on the one hand, government is the owner (in terms of state property, including invested in the authorized capital of commercial organizations and assigned to non-profit organizations on the basis of property rights), i.e., a participant in economic processes, on the other hand, the state is the regulator of the main economic processes. Although in the modern world the economy of most countries is based on the dominance of the private (market) sector, it is still difficult to find at least one country where there is not present at least a small share of state-owned enterprises.

At this stage of the development of property relations, it is interpreted as a set of competencies, on the basis of which the principles of regulation and the process of using certain resources are determined in accordance with the need to ensure economic efficiency.

Market oriented reforms carried out in the Republic of Armenia in the 1990’s radically changes the structure of ownership in our country (as a result of the implementation of three large-scale programs - the privatization of agricultural land, machinery, housing stock and state enterprises), led to the formation of private property, corporatization of enterprises.

The state can create positive changes in property relations, significantly influence the interest of business entities with state participation in increasing the efficiency of resource use, and also orient this activity in those directions that meet the interests of both the organizations themselves and society as a whole. The above, as well as many other factors, determine the relevance of the dissertation topic.

The purpose of the dissertation is to develop approaches and measures aimed at improving property management in the Republic of Armenia in terms of the constitutionality of this process. To achieve the goals set in the dissertation, the following research objectives are defined:

- to study the theoretical and methodological foundations of property formation, its development, modern interpretations of property rights and the implementation of these rights;
- to study the content of property as an economic category, the definition of the constitutionality of property rights and comparative characteristics, the process of property management;
- to analyze the process of diversification and decentralization of property rights in the Republic of Armenia, to present the features of this process;

- to study the main directions of state property investment, in this regard, study the issues of property management in state commercial organizations, as well as in state and municipal non-profit organizations;
- to study the problems of establishing the institution of property rights in the Republic of Armenia and propose ways of improvement;
- to present approaches of assessing the effectiveness of property management in commercial organizations with state participation;
- to submit new instruments of economic and legal regulation in state and municipal non-profit organizations.

The main scientific results of the study are of theoretical and practical significance, the scientific novelty of which is as follows:

1. As a result of a comprehensive analysis of the theoretical and practical foundations of state management of the economy, the relationship and boundaries of state ownership and state entrepreneurship in the country's economy, the prerequisites for increasing the efficiency of managing them, and the content of property management tools in economic policy are substantiated.

2. Institutional indicators have been identified that play a decisive role in reducing the deficit of constitutionality, and are also used to cluster countries according to the criterion of constitutionality. Such indicators include the realization of property rights, the level of corruption, etc.

3. As a result of the analysis of the financial and economic results of the activities of commercial organizations with state participation, the implementation by the state of its property rights, negative factors were identified that affect the quality of state property management in the Republic of Armenia and measures aimed at improving the efficiency of this process were proposed.

4. Approaches to the assessment of the activities of commercial organizations with the state are proposed. participation in order to increase the level of profitability of state assets.

5. Changing the management model of state non-profit organizations should ensure the greatest independence of these organizations, as well as allow the introduction of business-oriented management tools that are typical for commercial organizations.

